

## Тексты и разыскания.

по

Армяно-Грузинской филологии

Книга VIII

ГОСУДАРСТВЕННЫЙ СТРОЙ ДРЕВНЕЙ ГРУЗИИ  
И ДРЕВНЕЙ АРМЕНИИ

Томъ I

Изслѣдованіе И. ДЖАВАХОВА

Петербургъ 1905 г.

Ազգաբնակութիւն

Հեղինակը գտնում է, որ այն Փամանակաշրջանում, երբ արդէն գրի ու գրականութեան շնորհիւ հնաբաւորութիւն ենք, ստանում որոշ չափով ուսումնասիրելու հայկակոն կեանքն ու կազմակերպութիւնը, այնէ Վ-ը գարում, ցեղը կազմում է Հայաստանի սոցիալական կազմակերպութեան հիմքը։ Պատմութեան այդ մասը ներկայացնում է մեր առաջ որպէս կոիւ ցեղի մէջ, երբ պատմախանառութիւնը ցեղական էր և ոչ անձնական՝ ինչպէս և զրէժինգրութիւնը։

«Տոհմ և ազգ բառերը աւելի որոշ նշանակութիւն ունեն, քան թէ տուն բառը, որոնցից առաջինը պարսկերէն է, իսկ միւսը հայերէն և երկումն էլ նշանակում են ցեղ։ Դազո՞ր Փարակեցին այդ երկու բառերն էլ գործ է ածում նոյն նշանակութեամբ. օրինակ ազգ Արծրունեաց, (45-ր երես), վոքրինչ ցած՝ տոհմ Արծրունեաց (գլ 25 երես 47 դ.). Նոյնպէս և Խորխորունեաց մասին 47 դ. և 72 երեսներին։ Ցեղական բաժանումն հին Հայաստանին յայտնի բարձր ձևն էր և նա էր կազմում պետական կազմի հիմքը. որ «ժողովուրդ» մաքով բառը յայտնի չէր հին Հայաստանում և պատմագիրները երբ ցանկանում էին երենց հայրենակից ամբողջ ժողովուրդի մասին խօսել, դիմում էին նկարագրական ձևի. օրինակ—«ժողով լինէր նախարարացն և իշխանացն, գործակալաց և զօրագլուխը, պետք և ամենայն աշխարհաժողովը» (Փաւոտոս III-ր երես)։ Հեղինակը բերելով

քաղմաթիւ օրինակներ, ցոյց է տալիս, թէ մըքան ուժեղ էր ցեղական կաղմակերպութիւնը Հայաստանում։ Մի քանի օրինակներով ցոյց է արւելմ, որ պատմական տեելի մօտ ժամանակներում Գային սոցիալական առանձին խմբեր, որոնք շատ թոյլ կազերով էին կրապուած իրար հետ, կամ որոսց միջի կապը նոյնին չէր նկատուում։

Մենք շատ քիչ բան կիտենք, թէ ցեղական կաղմակերպութեան միջոցին ինչպէս էր կեանքը, բայց այն, ինչ որ պահպանուել է պատմագիւների շնորհիւ, շատ բնորոշ պատկեր է ներկայացնում մեզ։ Յեղերի անվերջ կատաղի կռւիւը իրար դէմ վրիժառութեան անդուսպ կրքով, որը չէր ընդհատուում թափաւորի և հոգնորականութեան միջամտութիւնից յետոյ էլ, շատ սովորականն երևոյթ էր։ Աւելացրէք սորա վրայ և այն, որ այդպիսի կռուեի ժամանակ չէին խնայում ցեղի անդամներից ոչ ոքի և որ նրանցից իւրաքանչիւրը պատասխանատու էր իւր ցեղակցի յանցանքների համար։

Բերուած են բազմաթիւ օրինակներ այդպիսի ցեղական կռիւների, միջամտութեան և վրէժինդրութեան, երբ պատըժուում էր ամբողջ սեղը՝ մեղաւորն ու անմեղը միասին։ Կռուող նախարարներն յաճախ օգնութեան էին դիմում օտար եշխողներին, ինչպէս Բակուր իշխանը արքայի հետ կռուելիս գիմեց պարսից օգնութեան և արդպիսի պատճառներով անթնայ կռտուում էր ամբողջ ցեղը (Բակուրի առթիւ Աղձնեաց ցեղը)։ Հեղինակը դժնուում է, որ Փաւոտոոի Սկարմդրած Ժամանակաշրջանում ցեղական պրինցիպներն ու ցեղական վրէժննդրութիւնն էին կաղմում բոլոր շարժմանց հիմունը։

Անցնելով ցեղի ներքին կեանքի ուստումնասիրութեան, հեղինակն ասում է, որ կառավարելու լինում էր տանուտերը, որը և վարում էր ցեղի բոլոր գործերը, իսկ թէ միւս անդամներն ինչ պես էին խաղում զանազան խնդիրներ լուծելիս, ոչինչ յայտնի չէ։ Կան մի քանի դէպեր, որոնք ցոյց են տալիս, որ որևէ նաև անձեռնութեան միջոցին հարկաւոր էր ցեղակիցների կարծեքը։ Ինչպէս նաև կան դէպեր, երբ տանուտէրը խորհրդակցում է իւր ցեղի անդամների հետ։ Բայց թէ արդեօք գա անհրաժեշտ էր, կա՞ր արդեօք ցեղական խորհուրդ, որը քննադատում էր և ուղղութիւն տալիս տանուտէրերի գործունէութեան, շատ դժուար է ասել։

Տանուտէր լինում էր ցեղի աւագը և նա նոյն կարգաւանցնում էր յետառդներին։ Ենորհիւ այս ոկզրունքի՝ ինքնըստիւքնան պարզ է, որ ընտրական եղանակի մասին խօսք լինել չէր

կարսդ, և ցեղի միւս անգամների ազդեցութիւնն անշուշաշատ թոյլ էր դորձերի սովորական ընթացքի ժամանակ։ Ըստ այս թէև Փաւստոսի պատմութեան մէջ կայ մի տեղ, որից կաւը ելի է կարծել, որ տանուտէրութիւնը թագաւորները մտցրին, (Փաւստոս 14 երես 67), բայց տանուտէրութիւնը աւելի շուածնունդ առաւ քան թագաւորութիւնը։ և թագաւորներն երբեմն միջամտելով ցեղի տանուտէր և միւս պաշտօնեաներ նշանակելու դորձում, առաջ էին տանում իրենց քաղաքական նպատակներն և այդ միջոցով շատ անգամ զսպում էին անհնագանդ ցեղերին։ Աւագութիւնը հին օրինական կարգն էր՝ մտցրած և որբագործած սովորութիւններով։ Թագաւորը միմիայն հաստատում էր և ստիպուած էր այդքանով քաւականանալ։ Բայց այդքան էլ քաւական էր։ Նրանց հպատակեցնելու միւս քայլերը աւելի հեշտութեամբ կարելի էր անել, որովհետեւ տանուտէր հաստատելու իրաւունքը թագաւորներին հնարաւորութիւն էր տալիս աստիճանաբար միջամտելու սովորութիւն դարձած կարգ ու կանոնի մէջ և յարմար աւելի եղած միջոցին խանդարելու այն։

Փաւստոս V, 1է երես 245.

— V, 1է երես 246.

Եղիշէ — — երես 125.

Աւագութեան սկզբունքն ազատ տեղեր պաշտօնեանեք նշանակելիս կերպել հայաստանումն էլ ընդհանուր սկզբունք էր։ այդ երեսում է Մովսէս Խորենացու (II ԿԲ.) ըերած հատուածից, որից տեսնում էնք, որ աւագութեան սկզբունքը միատեսակ ընդունուած էր՝ ինչպէս սովորական ցեղերի, այնպէս էլ արքայական ցեղի մէջ։

Թէև Մովսէս Խորենացին և ուրիշ պատմագիրները արքաների ցեղագրութիւնը գտելիս՝ մէշտ ասում են, թէ ինչպէտորդին յաջորդում է հօրը, այն է ուղեղ գծով, բայց հեղինակը գտնում է, որ պատմագիրներն այդ դէպքում մոլորութեան մէջ են ընկնում՝ նորագոյն կարգերն ու շարլօնական ձեզ փոխագրելով երկրի պետական կեանքի հնագոյն շրջաններն էլ։

Համեմատելով աւագութեան իրաւունքը Վրաստանում և հայաստանում, հեղինակը գտնում է, որ միանգամայն նման է եղել։ Փաւստոս Բիւղանդի պատմութիւնից ըերած հատուածով մենք տեսնում ենք, որ ցեղի մէջ աւագը նշանակւում էր տանուտէր, երկրորդը՝ հրամանատար զօրաց, ճիշտ այնպէս, ինչպէս Վրաստանում, որտեղ թագաւորից՝ Տամասախլիսից յետոց երկրորդը նշանակւում էր հրամանատար Վրաստանի ընդհանուր

զօրաց։ Տարբերութիւնը միայն նրանումն է, որ հայ պատմագերները մեզ չեն հաղորդում արդեօք հայ թագաւորներն էլ տանուտէր կոչուել են, թէ ո՛չ ինչպէս Դիօն Կասիի պատմութիւնից երեսում է, հայոց թագաւորը հագնում էր շապիկ (խիտօն), ծիրանեգոյն պատմունան, թադ և փաթաթոց։ Տեղական սովորութեան համաձայն՝ նու ձիով էր մտնում ամրոցները։

Հեղինակն այնուհետեւ բերում է Ղազար Փարավեցու յիշած տանուտէրերի ցուցակը (Դ. Փ. գլուխ Ի. Երես 45.) և փորձում է որոշել, թէ ինչումն էր կայանում նրանց իրաւունքը և ինչպէս պէտք է հասկանալ այդտեղ յիշուած տէր կամ տանուտէր ըառերը։ Բազմաթիւ օրինակներով ցոյց է տրուած, թէ ինչպէս տանուտէրերն երբեմն կոչուում էին աւագ, որը կախուած էր կամ տարիքից և կամ գահից՝ այն երկրեց, որը հպատակւում էր տանուտէրին, թէև այդ տիտղոսը ոչ մի առաւելութիւն չէր տալիս աւագին սովորական տանուտէրերի դէմ։ Տանուտէրը մեր ուսումնասիրութեան ենթակայ շրջանում ոչ միայն ցեղի գլուխն էր, այլ և պետ և կառավարիչ որոշ շրջանի, որը նրա ցեղի ընակավայրն էր և այդ ցեղի անունն էր կրում։ Որպէս կառավարիչներ՝ այդ տանուտէրները ունեին իշխանութիւն իրենց գաւառի վրայ, ունեին հեծեալ և հետևակ զօրք և այդ պատճառով էլ կոչուում էին նաև իշխան, որը տէր ըառն ոչինչ չի աւելացնում, թէև հետզհետէ սկսում է փոխարինել տէր և տանուտէր ըառերին։ Այնուհետեւ բացարում է, թէ ինչ մաքով էին գործածւում պատիւ, գահ, գործակալ, իշխանութիւն, սեպուհ և նախարար ըառերը, ինչպէս այլ և այլ տանուտէրութեան գորքերը չեն միանում մի ընդհանուր հրամանատարի իշխանութեան ներքոյ, այլ միշտ իրենց տանուտէրերի կամ իշխանների հետ էին գուրս գալիս և շարւում պատերազմական կարգով համաձայն երկրի բաժանման։ Տանուտէր իշխաններն ունեին սեփական ամրոցներ, որոնց մէջ իրենք սովորաբար ապրում էին, ունեին կնիք, որով կնքում էին նամակներն ու վաւերաթղթերը՝ որպէս նշան իրենց համաձայնութեան՝ հաստատութեան։

Այս բոլորից յետոյ յարգելի գիտնականը ունեցած աղքեւ ըներով աշխատում է պարզել, թէ Հայաստանում էլ ինչ դասակարգեր կային։ Թէև գտնում է, որ նիւթի աղքատութեան պատճառով չի կարելի բաւականաչափ որոշել նրանց երաւական գրութիւնը, սակայն կարելի է պարզել, թէ նրանց ցեց որոնք էին ազատ համարւում և որոնք ստորագրեալ կամ ճորտ։ Հին Հայաստանի ազգաբնակութիւնը՝ բացի նախարարա-

Համն ցեղեցից, բաժանւում էր ազատների, սամիկների, ստունիկների, շինականների:

Աղասիները նախարարներից անկախ գասակարդ այլն խռումը էին կազմում, ինչպէս այդ երեսում է պատմագիրներից. (Դ. Փարուղ. Պ. Հ. Երես 128): Աղասիները նախարարների և ռամիկների միջին գասակարգն էին կաղմում և եղած պատմական փաստերից կարելի է ենթադրել, որ ռամիկներն իրենք էլ պէտք է որ պատճառաբարութիւն և վրաց հին թարգմանութեանց մէջ ռամիկ բառը թարգմանուած է չիներուի:

Աստանիկ կոչւում էին Նըանք, որոնք ընակուում էին ար-  
քունի տան հոգեսի վրայ, որոնք և ացատ էին:

Նիստականները կազմում էին հինգ հայաստանի ազգաբնակչութեան ստորին գառակարգը, որոնք պարապում էին երկօն մշակութեամբ, որոշ կազմակերպութիւնն ունէին և կախումն ունէին իշխաններից:

«Եկեղ տու մեծ եպիսկոպոսապեան հայոց ներսէս մեծամեծք,  
նախարարք, կուսակալք, կողմէնակալք, գաւառապետք, գոր-  
ծակալք և դասադիմք ըինականաց» (Հ. Փ., գլ. մԱ. Երես 165).  
Մի քանի տեղ գործ է ածւում նաև ծառայ բառը—  
ստրուկներ, սակայն նրանց իրաւական գլութեան մասին ոչնչէ:  
ի կարելի առեւ:

Այսպէս ահա՛, երկտասարդ գիտնական ի. Զաւախովը մեզ  
տալիս է մի ինքնուրով ուսումնասիրութեւն հէնց մեր պատ-  
մագիրների հազրադած նիւթից հանած՝ հին Հայաստանի ոսցիա-  
լիկան կազմակերպութեան մասին, որի նմանը գեռ կտաար-  
ուած չէր և որը բաւական տարբերութէ Տ. Զամշեանի և  
Ավշանի նոյնանման գործերից: Պ. Զաւախովի աշխատութեւնը  
մի նոր գանձ է մեր պատմութեան և անցեալի ուսումնասիրու-  
թեան համար և կատախուած է գիտնական բարեխղճութեամբ:  
Յաւում ենք, որ տպագրութեւնը պատ չէ սխալներից, թէն  
դա ինքն ըստ ինքեան կորցնուամ է իւր նշանակութեւնը կտա-  
րած գեղեցիկ աշխատութեան հանդէա:

**E, S, W, N**